Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
«26» 11 2019 թ.
(արձանագրություն № 3)

Վավերացնում եմ
Ռեկտոր _____ Վ. Ուռուտյան
«26» 11 2019 թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի

Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. "Հայաստանի ազգային ագրարային համալսարան" հիմնադրամի (այսուհետ Հիմնադրամ) որակի գնահատման և ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Հիմնադրամի ուսումնական, կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, գործունեության որակի գնահատման և ապահովման, ինքնավերլուծության, մասնագիտությունների լիցենզավորման ու հավատարմագրման գործընթացները պլանավորող և իրականացնող, համակարգող և վերահսկող կառույց է:

1.2. Կենտրոնն իր գործունեությունը կանոնակարգում է ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությանմասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության և, Կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի՝ կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Հիմնադրամի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Համալսարանի ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

1.3. Կենտրոնը ղեկավարում է տնօրենը, որին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է համալսարանի ռեկտորը:

1.4. Կենտրոնի տնօրենն ի պաշտոնե ընդգրկվում է ռեկտորատի կազմում:

2. ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Կենտրոնը կազմված է երկու բաժնից՝

- Կրթական բարեփոխումների բաժին,
- Որակի կառավարման բաժին,

2.2. Կենտրոնի աշխատողների պարտականությունները բխում են Կենտրոնի խնդիրներից և գործառույթներից:

2.3. Կենտրոնի աշխատողները պաշտոններում նշանակվում կամ ազատվում են ռեկտորի հրամանով՝ կենտրոնի տնօրենի առաջարկությամբ:

3. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ

3.1. Կրթական բարեփոխումների բաժինի հիմնական նպատակն է համալսարանի կրթական բարեփոխումներին ուղղված աշխատանքների իրականացումը:

3.2. Կրթական բարեփոխումների բաժնի խնդիրները և գործառույթներն են.

3.2.1. ՀԱԱՀ կրթական բարեփոխումների համար անհրաժեշտ փաստաթղթային հենքի մշակում և պարբերաբար վերանայում:

3.2.2. Հիմնադրամի առաքելությունից բխող՝ զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, զարգացման հիմնական գերակայությունների, նպատակների և խնդիրների բացահայտում և ամրագրում:

3.2.3. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով առաջնորդվելով՝ ստորաբաժանումների տարեկան գործողության պլանավորման և բարելավման աշխատանքների մշտադիտակում (մոնիթորինգ) և օժանդակում:

3.2.4. Մասնագիտությունների կրթական ծրագրերի, ընդհանրապես կրթական գործունեության կազմակերպման առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) և տեղայնացում:

3.2.5. Ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը միտված միջոցառումների համակարգում և իրականացում:

3.2.6. Մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության մշակում և պարբերական վերանայում:

3.2.7. Նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ուսումնասիրում և ներդրման առաջարկների մշակում:

3.2.8. Արտաքին փորձագիտական խմբի և/կամ Կենտրոնի որակի կառավարման բաժնի կողմից տրված գնահատման եզրակացության քննարկում ներքին շահակիցների հետ և աջակցություն վերջիններիս՝ իրենց ստորաբաժանումների պլանների (ըստ փուլերի) բարելավմանը և վերանայմանը միտված գործողություններում:

3.2.9. Հիմնադրամի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և ռիսկերի վերլուծություն ու գնահատում, դրանց հաղթահարման ուղիների առաջարկությունների փաթեթի մշակում:

4. ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

4.1. Որակի կառավարման բաժնի նպատակն է Հիմնադրամի որակի գնահատման և ապահովման համակարգի և դրան վերաբերվող փաստաթղթային փաթեթների մշակումը, կատարելագործումը և ներդրումը, ինչպես նաև ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացների իրականացման համակարգումը:

4.2. Որակի կառավարման բաժնի խնդիրները և գործառույթներն են.

4.2.1. Կազմակերպել և իրականացնել ՀԱԱՀ որակի ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթային հենքի մշակում և պարբերաբար վերանայում:

4.2.2. ՀԱԱՀ որակի ներքին չափանիշների և չափորոշիչների գործիքների ու մեխանիզմների մշակում, պարբերական վերանայում:

4.2.3. ՀԱԱՀ ռազմավարական պլանի գործողությունների ծրագրի ԳԱՑ-երի մշակում: Կազմակերպել և իրականացնել ռազմավարական պլանի գործողությունների ծրագրի եռամսյակային, տարեկան, ամփոփիչ գնահատում և խնդիրների վերհանում, ինչպես նաև ամբողջական ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատում:

4.2.4. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի ԳԱՑ-երի հիման վրա ստորաբաժանումների տարեկան գործողության իրականացման մոնիտորինգ և արդյունքների գնահատման աշխատանքների կազմակերպում և կառավարում:

4.2.5. ՀԱԱՀ կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունների ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման համար որակի ապահովման ընթացակարգերի, ուղեցույցերի, գործիքակազմի մշակում և պարբերական վերանայում:

4.2.6. ՀԱԱՀ ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև արտաքին փորձագետների հետ սերտ համագործակցում:

4.2.7. ՀԱԱՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացի համակարգում և համապատասխան զեկույցի պատրաստում: Հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի պատշաճ մակարդակով կազմակերպում:

4.2.8. Որակի ապահովման և Հիմնադրամի գործունեության բոլոր ոլորտներում լավագույն փորձի ուսումնասիրության և արդյունքների հիման վրա բարելավման առաջարկների ներկայացում:

4.2.9. Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման որակի ապահովման ընթացակարգերի և ուղեցույցերի մշակում՝ ապահովելով կրթական ծրագրերի սահմանված չափորոշիչներին համապատասխանությունը: Կազմակերպել կրթական տարբեր

մակարդակների մասնագիտության կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պարբերական մշտադիտարկման և վերանայման գործընթացները՝ որակի ապահովման ընթացակարգերին համապատասխան:

4.2.10. Համալսարանի կրթական տարբեր մակարդակների մասնագիտությունների լիցենզավորման աշխատանքների իրականացում

4.2.11. Շահակիցների կարիքների գնահատման և հետադարձ կապի ապահովման գործիքակազմի մշակում և որակական ու քանանական հետազոտությունների պարբերական իրականացում:

4.2.12. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմի՝ որակի ապահովման, մասնավորապես աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի, կառույցների ռազմավարական պլանների, գործողությունների ծրագրի, ինքնագնահատման զեկույցների մշակման, գնահատման և բարելավման ուղղություններով վերապատրաստումների իրականացում: